ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2026 թվականի 2026 թվականի մայիսի 5-ից 17-ը Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն, ք. Պեկին և ք. Ուրումչի «Մեկ գոտի, մեկ ճանապարհ ծրագիր» խորագրով դասընթացին մասնակցության արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը՝**

Արուսյակ Խաչատրյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության նախարարության ճանապարհային ոլորտի քաղաքականության վարչության ճանապարհային ենթակառուցվածքի անվտանգության ծրագրերի վերլուծության և մշտադիտարկման բաժնի պետ:

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գլխավոր քարտուղարի սույն թվականի ապրիլի 28-ի 1032-Ա հրամանի համաձայն 2026թ. մայիսի 5-ից 17-ը գործուղվել եմ Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն, ք. Պեկին:

4. **Հրավիրող կողմը.**

Չինաստանի Ժողովրդական Հանրապետության առևտրի նախարարությանը կից «Միջազգային բիզնեսի պաշտոնյաների ակադեմիա» (International Business Officials Academy (AIBO))

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

Գործուղման նպատակն էր մասնակցել «Մեկ գոտի, մեկ ճանապարհ ծրագրի» և «Մետաքսի ճանապարհի» տնտեսական գոտու երկրների միջև տնտեսական և առևտրային համագործակցության ամրապնդում» խորագրով միջազգային սեմինարին, որի շրջանակներում ուսումնասիրվել են «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախաձեռնության շրջանակներում տնտեսական և առևտրային համագործակցության խորացման հնարավորությունները, Չինաստանի զարգացման փորձը, ինչպես նաև «Մետաքսի ճանապարհի» տնտեսական գոտու առանցքային տարածքների զարգացման ռազմավարությունները:

Սեմինարը նպատակ ուներ խթանել մասնակից երկրների միջև տնտեսական և առևտրային համագործակցությունը, փորձի փոխանակումը, ճանապարհային ենթակառուցվածքային կապերի զարգացումը, ինչպես նաև աջակցել տնտեսական դիվերսիֆիկացման և կայուն զարգացման գործընթացներին:

Сканировано с CamScanner

6. **Քննարկված թեմաները.**

Չինաստանի զարգացման մոդել և պետական կառավարման փորձ

- Չինաստանի ազգային զարգացման հիմնական առանձնահատկությունները և «Չինաստանին հատուկ նորարարության» մոտեցումները
- Չինաստանի ղեկավարների կառավարման փիլիսոփայությունը
- Պետական կառավարման և տնտեսական քաղաքականության համակարգումը

«Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախաձեռնություն

- «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախաձեռնության ռազմավարական նշանակությունը
- Մետաքսի ճանապարհի տնտեսական գոտու առանցքային տարածքների զարգացումը
- Մետաքսի ճանապարհի տնտեսական գոտու առանցքային տարածքների զարգացումը
- Տարածաշրջանային տնտեսական ինտեգրման և փոխկապակցվածության խթանումը

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

Սեմինարի շրջանակներում կազմակերպվել են հանդիպումներ Չինաստանի պետական մարմինների, գիտահետազոտական հաստատությունների, բիզնես կառույցների և տեղական ընկերությունների ներկայացուցիչների հետ:

2026 թվականի մայիսի 12-ին Ուրումչի քաղաքում կազմակերպված կոնֆերանսի ընթացքում ՀՀ խմբի կողմից ներկայացվել է շնորհանդես՝ Հայաստանի Հանրապետության Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի կարևորության, մակրոտնտեսական իրավիճակի, ներդրումային միջավայրի առանձնահատկությունների, ինչպես նաև Հայաստան-Չինաստան տնտեսական և առևտրային վիճակագրության վերաբերյալ: Հակիրճ խոսել եմ «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախաձեռնությանը Հայաստանի մասնակցության մասին:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Հանդիպումների ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերվել հետագա շարունակական համագործակցության վերաբերյալ:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Сканировано с CamScanner

Նշել եմ որ Հայաստանը հետաքրքրված է Չինաստանի հետ համագործակցության խորացմամբ, ենթակառուցվածքների զարգացման, լոգիստիկայի ոլորտներում: Հատուկ ուշադրություն եմ դարձրել տրանսպորտային միջանցքներին, տեխնոլոգիական փորձի փոխանակմանը, մասնագիտական վերապատրաստմանը: Ակնկալվում է ներդրումային համագործակցություն «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախաձեռնության շրջանակում:

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

19.05.2026թ.

Сканировано с CamScanner